

**ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ՀՀ ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ԴԱԼԱՏԻ 19.10.2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

19.10.2019 23:56



19.10.2019թ. տեղի ունեցավ ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողովը, որի օրակարգում ընդգրկված է եղել երեք հարց՝

**1) Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին.**

**2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին.**

**3) «Փաստաբանի օր» սահմանելու մասին:**

ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովն առանձին արձանագրություններով 19.10.2019 թվականին ամփոփել է վերը նշված օրակարգային հարցերով ընդհանուր ժողովի արդյունքները:

ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության համաձայն փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անձանց ձայների պարզ մեծամասնությամբ:

Համաձայն հաշվիչ հանձնաժողովի 19.10.2019 թվականի արձանագրությունների՝ **ժողովին մասնակցելու իրավունք ունեցող 2081 փաստաբանից**, ըստ ընտրական ցուցակի ստորագրությունների, **քվեաթերթիկ են ստացել 730 փաստաբան (35%):**

**Հաշվիչ հանձնաժողովն ամփոփել է քվեարկությունների արդյունքները:**

\*\*\*

**1) Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին օրակարգային հարցով քվեարկության արդյունքները.**

«Կողմ» - 600 ձայն

«Դեմ» - 114 ձայն

«Անվավեր» - 16 հատ

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը (քվեարկությանը մասնակցած փաստաբանների 82,19 տոկոս կողմ ձայներով) որոշել է՝

- հաստատել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի փոփոխությունները և լրացումները,

- վերոհիշյալ փոփոխությունների և լրացումների հիման վրա Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը շարադրել նոր խմբագրությամբ:

\*\*\*

**2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին օրակարգային հարցով քվեարկության արդյունքները.**

«Կողմ» - 611 ձայն

«Դեմ» - 102 ձայն

«Անվավեր» - 17 հատ

«Սահմանված նմուշին չհամապատասխանող» - 1 հատ

**ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը (քվեարկությանը մասնակցած փաստաբանների 83,69 տոկոս կողմ ձայներով) որոշել է՝**

- հաստատել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության փոփոխությունները և լրացումները,

- վերոհիշյալ փոփոխությունների և լրացումների հիման վրա Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ:

\* \* \*

**3) «Փաստաբանի օր» սահմանելու մասին օրակարգային հարցով քվեարկության արդյունքները.**

«Դեկտեմբերի 6» - 427 ձայն

«Հունիսի 2» - 275 ձայն

«Վերը նշված բոլոր առաջարկներին դեմ» - 18 ձայն

«Անվավեր» - 9 հատ

**ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը (քվեարկությանը մասնակցած փաստաբանների 58,49 տոկոս կողմ ձայներով) որոշել է՝**

- «Փաստաբանի օր» սահմանել «դեկտեմբերի 6-ը»:

---

**Բեռնել «Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին» օրակարգային հարցով ՀՀ ՓՊ հաշվիչ հանձնաժողովի՝**

- 19.10.2019թ. № 1 արձանագրությունը.

- 19.10.2019թ. № 2 արձանագրությունը.

- 19.10.2019թ. № 1-Լ որոշումը.

---

**Բեռնել «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին» օրակարգային հարցով ՀՀ ՓՊ հաշվիչ հանձնաժողովի՝**

- 19.10.2019թ. № 1 արձանագրությունը.

- 19.10.2019թ. № 2 արձանագրությունը.

- 19.10.2019թ. № 2-Լ որոշումը.

---

**Բեռնել «Փաստաբանի օր» սահմանելու մասին»  
օրակարգային հարցով ՀՀ ՓՊ հաշվիչ հանձնաժողովի`**

**- 19.10.2019թ. № 1 արձանագրությունը.**

**- 19.10.2019թ. № 2 արձանագրությունը.**

**- 19.10.2019թ. № 3-Լ որոշումը.**

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })